ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2024թ. փետրվարի 23 N 53-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 28-ի N 42-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 1-ում՝ «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) II գլխի 4-րդ բաժնի 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7) ՀՐԴԵՀԱՊԱՅԹՅՈՒՆԱՎՏԱՆԳ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ.

ա. Արտադրական օբյեկտներ, բենզալցակայաններ, հեղուկ (ՀԳԼՃԿ) և բնական (ԱԳԼՃԿ) գազի ավտոգազալցակայաններ՝ 86 հատ, որից Աշտարակի տարածաշրջանում՝ 49 հատ, Ապարանի տարածաշրջանում՝ 14 հատ, Թալինի տարածաշրջանում՝ 17 հատ, Արագածի տարածաշրջանում՝ 6 հատ:»

2) II գլխի 5-րդ բաժնի 5.1. ենթաբաժնի 3-րդ կետի ա. ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա՝ հրդեհապայթյունավտանգ օբյեկտների դասին են պատկանում մարզում գործող՝ ընդհանուր թվով 86 հատ բենզալցակայանները, գազալցակայանները և արտադրական օբյեկտները»:

3) II գլխի 5-րդ բաժնի 5՝1՝ ենթաբաժնի 7-րդ կետի ա՝ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«ա. մարզում առկա են փլուզման և քարաթափման 11 վտանգավոր տեղամասեր, որոնք գտնվում են Աշտարակ, Ապարան, Թալին և Մեծաձոր համայնքների տարածքներում»:

4) Աղյուսակ 1-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 1-ի:

5) Աղյուսակ 5-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 2-ի:

6) Աղյուսակ 6-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 3-ի:

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 2-ում՝ «ՀԱԷԿ-ի միջուկային և /կամ/ ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Մարզի ղեկավար կազմի և ՆՊՄԻ, ՇՊՄՊ գոտիներում գտնվող բնակավայրերի ազդարարման սխեման փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 4-ի:

2) Նախահարձակ պաշտպանական միջոցառումների իրականացման և շտապ պաշտպանական միջոցառումների պլանավորման գոտիների բնակչության իրային ապահովման միջոցների հաշվարկը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 5-ի:

3. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 3-ում՝ «Ուժեղ երկրաշարժի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) II գլխի 8-րդ կետի 1-ին ենթակետի վերջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7-8 բալանոց գոտում կհայտնվեն Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի 15 բնակավայր՝ Աշտարակ, Նոր Երզնկա, Ուշի, Օհանավան, Արտաշավան, Հարթավան, Շողակն, Վարդենուտ, Վարդենիս, Ծաղկաշեն, Արագած, Քուչակ, Եղիպատրուշ, Շենավան, Կարբի»:

2) Երկրաշարժի ազդեցության գոտու բնակչության վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 6-ի:

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 4-ում՝ «Քիմիական վտանգավոր օբյեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում ՈՒՆԹՆ օգտագործող օբյեկտների և քիմիական վարակվածության հնարավոր ծավալների վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 7-ի:

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 5-ում՝ «Ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի բնակչության պաշտպանության պլան»-ում մարզի ջրամբարների վերաբերյալ տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 8-ի:

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 6-ում՝ «Խոշոր հիդեհապայթյունավտանգ օբեկտների վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզում առկա հիդեհապայթյունավտանգ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 9-ի:

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 8-ում՝ «Ձնաբքի ժամանակ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզի ավտոճանապարհները սպասարկող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 10-ի:

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 11-ում՝ «Թուխմանուկ պոչամբարի պատվարի փլուզման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզի տարածքում առկա պոչամբարի և հիմնական ցուցանիշների վերաբերյալ

տեղեկատվության աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 11-ի:

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 12-ում՝ «Համաճարակների դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ում Արագածոտնի մարզի ճառագայթային, քիմիական և մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգի մարմինների մասին՝ ըստ գերատեսչական պատկանելիության, տվյալների աղյուսակը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 12-ի:

10. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2014 թվականի ապրիլի 28-ի N 42-Ա որոշմամբ հաստատված հավելված N 13-ը՝ «Խոշոր քարաթափումների և սողանքի առաջացման դեպքում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի գործելու պլան»-ը փոխարինել նոր լրամշակված տարբերակով՝ համաձայն հավելված 13-ի:

11. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին:

12. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:

13. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Восстановить по умолчанию

X

VERIFIED OCSP 2/26/2024 18:59:17 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ